ՄՈՎՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԱԽՃԱՆԻԼԸ.

Մայր Աթոռոյս Միաբանութեան անդամներէն Դեր. Մովսէս Արքեպիսկոպոս Աղարեան Մաղաքեանց Գանձակեցի չկարողանալով բժշկութիւն քանի տարիներէ հետէ ստացած ստամոքսի հիւանդութենէն,— թէ և հրամանաւ Վ.եհ. Կաթողիկոսի բազում խնամք և հմուտ բժշկաց ձեռամբք մի երկու ամիսէ հետէ դարման տարուեցաւ, — ի 6ն ներկայ ամսոյս կնքեց իւր անցաւոր կենաց ընթացքը ի հասակի 54 ամաց, և ի 7ն (ի յաջորդ աւուր) արժանաւոր հանդիսիւ ամփոփեցաւ մարմինն ի հող ի գերեզմանատան միաբանից Ս. Էջմիածնի։

Հանգուցեալն ի վանս Հաղբատու՝ վանահայրութեան, ի գաւառական Սօմխէթու և Լօռւոյ՝ բարեկարգչութեան, ի թեմ. ատենին Շամախւոյ՝ նախանդամութեան, և ապա Կառավարչութեան, յԱղէքսանդրապոլ, յԵրևան փոխանորդութեանց պաշտօններ վարելով, ի 1861 Եպիսկոպոսական աստիճանին արժանացեալ է, իսկ ի 1863ն նշանակեալ էր Առաջնորդ Պարսկաստանի և Հնդկաստանի։

ՄԵՂՈՒ

Ներկայ ամսոյ սկիզբէն Տփխիսայ Մեղու շաբաթական լրագիրը նոր փոփոխութեամբք սկսաւ հրատարակուիլ մի և նոյն քաղաքական և բանասիրական բովանդակութեամբք՝ բայց աւելի ընդարձակ պարունակութեամբք և տեղեկութեամբք ի մեծամերթ դիրս։

Խմբագրութիւնը այժմ մի քանի ուսումնական և գիտնական անձանցմէ կազմեալ ընկերութեան վերայ է, որք սիրով և համաձայնութեամբ շարունակելով իւրեանց պաշտօնները՝ կը յուսամք զի այսուհետև առաւել ազգօգուտ և արդիւնաւէտ պէտք է փայլեցնեն զՄեղու։

Ցարդ ստացեալ մի քանի թիւերը մաքուր տպագրութիւն և հետաքրքրական նիւթեր ունին։

ԴԵՐ. ԱՆԴՐԷԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Ի 13ն ամսոյս Դեր. Անդրէաս Ս. Արքեպիսկոպոս վերադարձաւ յիւր վիճակն ի Շամախի։

ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԱՑ.

Ի 19ն ամսոյս յաւուր կիւրակէի Տնտեսին մեծի պահոց՝ Վաղարշապատայ համար երջանիկ օր ծագած էր, և օդոյ պարզութիւն և գեղեցկութիւն առաւել ևս պայծառ կը ներկայացնէր զհանդէս։ Օրիորդաց դպրոցի բացման հանդէսն էր այս, յորում խուռն բազմութիւն ժողովրդեան արանց և կանանց հանդիսակից կը գտնուէին և իւրաքանչիւրոց յերեսս արտատիպած սրտագին գոհունակութեանց և անպատում ցնծութեանց նշանքն առաւել շքեղութիւն կշնորհէին հանդիսին, և ապագային մէջ դպրոցի յարատև զարգացման՝ արդիւնաւորութեան և ևս ընդարձակութեան գրաւականք էին զուգութեամբ սիրոյ՝ սրտից և ազգօգուտ բաղձանաց հանդերձ փոյթեռանդն ջանիւք։

Ցիրաւի Վաղարշապատը յոյժ դանդաղ գրտնուած և յամեցած էր այս կենսական խնդրոյս մէջ, և որ պարտ էր այլոց տեղեաց բարի օրինակ և յորդոր լինել, սակայն ցաւալից ինչ ինչ պարագայք և ազդեցութիւնք՝ մինչև անգամ յաջողեցան նորին Վ.եհ.ափառութեան Ս. Կաթողիկոսի բերանացի և յատուկ կոնդակաւ պատուէր՝ յորդորներ և ստիպմունքները ապարդիւն առնել, ուստի Նորին Ս. Օծութիւնը այլ ևս համբերատար չլինելով՝ ինքնին յատուկ Կոնդակաւ չորս բարեպաշտուհի և ազնուուհի տիկիններէն խնամակալուհեաց Հոգաբարձութիւն հաստատեց, որոց անուանք են բարեպաշտուհի և ազնուի տիկնայք Եւփիմէ մհ. Պետրոսեան՝ քոյրն Վ.եհ. Կաթողիկոսի, Նատալիա Խանազեանց, Փափար Թաղիանոսեանց և Նատալիա Տէր — Յովսէփեանց։

Այս յիշատակեալ ջերմեռանդ տիկնայք անմիջապէս փութացին ստորագրութիւն բանալ և նպաստ հաւաքել, որով առ այժմ վարձեցին մի յարմար տուն, և մի վարժուհի և երկու վարժապետ պատրաստեցին, և քսանէն աւելի աշակերտուհիք ընկալեալ կան, որք ի բացման հանդիսին Յեկեղեցւոյ ցդպրոցն իւրեանց նորաձև հագուստներով զարդարեալ ի միասին հանդիսին առջևէն գնացին և յօրհնութեան դպրոցին ներկայ գտնուեցան։

Դաս աւանդելիք առարկայքն են Հայերէն ընթերցանութիւն և գիր, կրօն, ասղնեգործութիւն, անավարչութիւն և այլն, և ի ժամանակին Ռուսերէն ընթերցանութիւն և գիր։

Անշուշտ եմք՝ զի յիշեալ խնամակալ հոգաբարձուհիք հաստատամիտ սիրով և ջերմեռանդութեամբ պիտի շարունակեն իւրեանց գործունէութիւնը ստանձնած փափուկ և վսեմ պաշտօնին մէջ Օրիորդաց դպրոցի հաստատութեան, ապահովութեան, պայծառութեան և արդիւնաւորութեան համար. ուստի և կը մաղթենք նոցա կարողութիւն և յաջողութիւն շնորհիւ Տեառն։

Յաջորդ թուով ի նպաստ Օրիորդաց դպրոցի Նուիրատուաց անուանքը և նուէրքը, ևս ի բացման Հանդիսի ընթերցեալ ճառը կը հրատարակենք։

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂԱՓԻՐԵԱՆՑ։

Ըստ հրամանի Վ.Հ. Կաթողիկոսի՝ ի 19ն ամսոյս ընդ երեկս Աղէքսանդրապոլոյ Առաջնորդական փոխանորդ Արժ. Գրիգոր վարդապետ Աղաֆիրեանց եկն ի Մայր Աթոռս։

ՆՈՐ ՉԵՌՆԱԴՐԵԱԼ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ։

Ի 26 ամսոյս՝ Նորին Վ.Հ. ափաուութիւն Տ. Տ. Գէորգ Ս. Կաթողիկոս ամենայն Հայոց սուրբ Պատարագ մատոյց և Եպիսկոպոս ձեռնադրեց ի միաբանից Մայր Աթոռոյս զԳրիգորիս Ծ. Վարդապետն Յովհաննէսեան Փիլիպպեցի, զՓոխանորդ Աղէքսանդրապոլոյ զԳրիգոր Վարդապետ Աղաֆիրեանց և զանդամս Սինոդի զՄեսրոպ Վարդապետ Սմբատեան և զՅովակիմ Վարդապետ Տէր-Գրիգորեան։

Բարեմաղթենք վասն Նոցուն Գերապատուութեանց՝ զի կրօնական այս բարձր՝ վսեմ և միանգամայն ծանրաբեռ Եպիսկոպոսական պաշտօնի ասպարիզի մէջ առաւել ևս ոգեւորեալ՝ Եկեղեցւոյ հարազատ՝ հաւատարիմ և անձնանուէր Հովիւք հանդիսանան և փայլին առաքինութեամբ, և Հայաստանեայց բազմակարօտ որդւոց բարեխնամ և արթուն Հաւք և խնամածուք լինին։

ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ
ՀԱՑՈՑ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ։

Գեր. Գրիգորիս Սրբազան Եպիսկոպոս Յովհաննէսեան Փիլիպպեցի կարգեցաւ ի պաշտօն Առաջնորդութեան վիճակին Ամենափրկչեան Ս. Խ.Վանուց Նոր – Ջուղայու՝ այս է Հնդկաստանի և Պարսկաստանի։

Նորին Գերապատուութեան ի Կարս քաղաք Շիրակայ և ի Թեմն Վիճակին իւրոյ աւելի քան զչորս ամս Առաջնորդութեան միջոցում՝ իւր հօտին վերայ ցոյց տուած խնամք և հոգացողութիւն, Խօշավանուց վերանորոգումն և բարեկարգութիւնն, նաև դպրոցաց յառաջադիմութեան անխոնջ ջանքը արդարև գովութեան արժանի են, որովք և ժողովրդեան համակրութիւնքն առ ինքն գրաւած էր, բայց յինչ և իցէ պատճառս յանցելումն կամովին հրաժարելով իւր վիճակէն՝ ի Պոլսոյ ուղղակի դիմեց առ Վ.Հ. Հայրապետն ի միաբանակցութիւն Մայր Աթոռոյս։

Իսկ ամսոյս սկիզբներում վախճանելով Հնդկ. և Պարսկ. վիճակաց Առաջնորդ Մովսէս Աբքեպիսկոպոս՝ արժան դատեց Վ.Հ. Կաթողիկոս նշանակել զնա ի տեղի հանգուցելոյն, և յառաջիկայ Ապրիլ ամսոյ սկիզբներում պիտի մեկնի աստի երթալ ի Սպահան։

Արդ Գեր. Գրիգորիս Եպիսկոպոսի անցեալ պաշտօնին մէջ ցցուցած ժրաջան և արթուն գործունէութիւնքն գրաւական կհամարին յառաջակայ պաշտօնին մէջ ունենալիք վարմանց և ընթացից, և անշուշտ եմք՝ զի Նորին ուսումնասէր՝ բարեկիրթ և եռանդուն զգացմանց ազդօգուտ արդեանց և ջանից ի մասին գոհ պէտք է լինին մեր սիրելի ազգայինք որ ի Հնդկաստան և ի Պարսկաստան, և իւրեանց վաղեմի տրտունջք և դժգոհութիւնք պիտի փոխարկուին յուրախութիւն և ի մխիթարութիւն։

ԳՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԻԺ.

«ՄԻ ՏԱՐ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ ԶԻ ՄԻ ԳՈՂԱՑԱՅՑ»։

Եթէ ժրաց ձեռքերն անգործ լինին յօգնականութիւն աղքատաց՝ հարկաւ ամենափորձ իրականութեան անընդիմադրելի հարկապահանջութեանց մէջ տեղի պիտի բռնէ առաջարանս, որոյ հաւաստիքն դարևոր ժամանակներով յառաջ աշխարհիս՝ իմաստութեամբ, առաջին և վերջին մարդն, քաջ գիտելով՝ կնքած է իւր բազմափորձ և իմաստայեղց հանճարովն, ասելով. մի՛ տար աղքատութիւն, զի մի՛ գողացայց։ Որոյ ճշմարտութեան այսօր և Պարսկատան հաւատարիմ վկայ է հանդիսանում։

Քանզի՝ որոց դառն էր ի լիութեան՝ պտուղ գողութեան, արդէն նոցա սովով քաղցրացաւ նոյնն, ըստ որում՝ գերազաս է ինքեանց զինու դատաւորացն զրաւել իւրեանց կեանքն, քան թէ բռնութեամբ սովու, վասն որոյ այս ընտրութեամբ ի 20 Յունվարի Ներկայ ամի, ուրն անձինք ընկճելով սովու սաստկութեան լծին տակ, կպարտաւորին գողութեամբ իւրեանց օրական պարէնն գրտանել, ուստի կխորհին իւրեանց մտադրութեանն գործիք և յառաջընթաց լրտես գտանել զոմն պառաւ, և կյաջողին, վասն զի գտած պարսկապառաւն ցերեկեան մանրամասնարար դիտողութեամբ մին հարուստ պարսիկ վաճառականի տան ստացուածոց տեղիքն հանգամանօրէն կներկայացնէ իւրեան թելադիր և գողութեան տրամադիր անձանց, զուարթադէմ դիմաք իրրև աւետարեր հրեշտակ առ նոսա փութայով. որոց տեղեկութիւն նկարագրելէն ետքը՝ փութապէս կմեկնի կարծեաց տեղիք չտայոյ առթիւ, իսկ գողութեան տրամադիրքն կպատրաստուին ի կատար ածել իւրեանց դիտաւորութիւնն, ուստի երբ քունն իւր մխիթարական սփոփանքն ընականաբար բանականութեան